ERNST & YOUNG

Ernst & Young CJSC
1 Northern Ave., Office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 10 500790
+374 10 500705
Fax: +374 10 500706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ.: +374 10 500790
+374 10 500705
Ֆաքս: +374 10 500706
www.ey.com/am

# Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ համախմված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերին և Խորհրդին

Կից ներկայացված ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմված են 2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունից, 2012թ.-ի ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունից, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունից, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունից և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունից, որոնք քաղված են 2012թ.-ի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության և նրա դուստր ընկերության (այսուհետ «Խումբ») աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններից: Մենք տվել ենք դրական աուդիտորական եզրակացություն 2 ապրիլի 2013թ. թողարկված այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր աուդիտորական հաշվետվությունում:

## *Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար աուդիտի ենթարկված անձի պատասխանատվությունը*

Աուդիտի ենթարկված անձի ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու համար:

## *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է «Ամփոփ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ուղղությամբ աշխատանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտին (ԱՄՍ 810) համապատասխան իրականացրած ընթացակարգերի հիման վրա ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության արտահայտումը:

## Եզրակացություն

Մեր կարծիքով, 2012թ.-ի Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվություններին:

Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Հիմնադիր գործընկեր — Դ. Վայնշտեյն

Գլխավոր տնօրեն Մ. Ալեքսանդարյան ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 01.09.11թ. տրված լիազորագրի հիման վրա) — Է. Հայրապետյան

2 ապրիլի, 2013թ.